ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(Օրթե Հարութի կենսափիլիսոփայությունը)

ԱՆԺԵԼԱ ԽՈՐԵՆՅԱՆ

Եվրոպական կրթություն ստացած հայ բանաստեղծը լավ գիտեր համաշխարհային գրականությունը, փիլիսոփայությունը, և դա էլ իր բարերար ազդեցությունն է թողել նրա աշխարհայացքի վրա, նպաստել նրա ինքնատիպ մտածողության ձևավորմանը: Սա իր արտացոլումն է դտել Իսահակյանի ստեղծագործության մեջ, հաղորդել նրա երկերին ընդգծված փիլիսոփայական բնույթ: Այս տեսակետից առանձնահատուկ տեղ է գրավում «Ուստա Կարո» վեպը: Հիրավի, սա Իսահակյանի ստեղծագործության առավել խոհական, փիլիսոփայական հնչեղություն ունեցող ստեղծագործությունն է: «Ուստա Կարո» վեպում բանաստեղծի փիլիսոփայական խոհերի ու մտորումների կրողները գլխավոր հերոսներն են՝ Ուստա Կարոն և Օրթե Հարութը: Գրականագետ Ավիկ Իսահակյանը նկատում է. «Տարիների ընթացքում «Ուստա Կարոն» դառնում է հեղինակի յուրօրինակ երկվոլյակը, երկրորդ եսը, իր մտքերի, դաղափարական հայացքների արտահայտիչը...»[1]:

Առաջին տարբերակում Կարոյի և Հարութի խոսակցությունները սեղմ են, հետագա մշակումներում Իսահակյանը շատ է աշխատել այս խնդրի վրա՝ առավել մեծ տեղ տալով նրանց փիլիսոփայական խորհրդածություններին: Երկու հոգեկից ընկերներ՝ մեկը կյանքի հևքով ապրող, նրա հանդեպ անսահման սիրուց ծնված լուսավոր հեքիաթի կրողը՝ Կարոն, մյուսը՝ դարձյալ աշխարհի հանդեպ սիրով լցված, մտքի թռիչքով տիեզերքը սլացող, նրա անհունի մեջ թափանցել փորձող, աշխարհն ու նրա օրենքները քննող, սակայն կասկածող, մռայլ հոռետես Հարութը փիլիսոփայում են: Վեպի հերոսների հոգեբանությունը և վարքը Իսահակյանը բնութագրում է օպտիմիզմի և պեսիմիզմի տեսանկյունից: Կարոն, ըստ Իսահակյանի մի բնութագրման, աշխարհն ու երևույթները ընկալում է ոչ այնպես, ինչպես նրանք կան, այլ լավատեսորեն, այստեղից էլ նրա՝ Դոն Կիխոտի կերպարին հոգեհարազատ լինելը. «...օպտիմիզմը լավատեսությունն է, իրականությունը զարդարում է իր տենչերով, իրականությունը իր ցանկության զավակն է, օպտիմիստները իլիուզոնիստ են, ռոմանտիկ <...> ինքնախաբեությամբ ապրողներ, պատրանքների մեջ ապրողներ, չեն տեսնում կյանքի դաժանությունը, հիվանդություններ, պատերազմ, մահ, նրանք ջահելներ են, հերոսներ, սավառնորդներ, հանդուգներ, օպտիմիզմը ապրեցնող է,

---

1 Ավետիք Իսահակյան. Ուստա Կարո, Երևան, 2000, էջ 290:

ոգևորող, Դոն – քիշոտիզմ – Ուստա Կարո»[2]: Իսկ պեսիմիզմը իրատեսությունն է՝ անզարդ ու դառը իրականությունը, ուր անհատն ամեն բան տեսնում է այնպես, ինչպես այն կա: Այս իմաստով Իսահակյանը Հարությունին բնութագրում է իբրև միանգամայն իրատես հերոսի. « Պեսիմիզմը իրատեսություն է, նա իրականությունը տեսնում է առանց չպարի, մերկապարանոց ճշմարտությունը և դրա պատճառով էլ նա դառն է, վշտացնող, հուսահատեցնող: Նա տեսնում է աշխարհը – բնությունը դաժան, անգութ, գայլանոց, մարդը՝ էգոիստ, գազանային, կյանքը՝ կռիվ՝ անգութ կռիվ, մարդկային կյանքը՝ տանջանք, ցավեր, ախտեր, ծերություն, մահ... Օրթե Հարութ»[3]: Այս վեպի գրառումներից ավելի վաղ՝ 1892 թ., Իսահակյանը «Հիշատակարանում» իր մասին գրում էր. «... Ես, իհարկե, սաստիկ պեսիմիստ եմ և ջերմ պաշտպան այդ ուղղությանը, այդպես է պահանջում իմ հոգին»[4]: Սակայն ի տարբերություն իր ցանկությանը՝ «լինել պեսիմիստ և գործող...», նրա հերոսը՝ Հարությունը, այդպիսին չէ: Նա պեսիմիստ է և անգործունյա, ինչպիսին իրականում, Իսահակյանի ձևակերպմամբ, լինում է պեսիմիստը. «պեսիմիզմը ճշմարտություն է, բայց անգործունեություն»[5]: Նրա հերոսը վեպում հենց այդպիսի անհատն է, որը, խորությամբ ըմբռնելով կյանքն իր բոլոր գրսևորումների մեջ, հուսահատվում է, և, ապրելով մարդկանցից հեռու, կտրվելով կյանքի առօրյայից ու շփումներից, ներանձնության պահերին, նաև տեսիլների մեջ ընկնելով, շարունակ քննում է աշխարհն ու դրա օրենքները: Ժամանակի հետ նրա հուսահատությունն ու վիշտը ավելի խորանում են ու տառապեցնում զգայուն հոգին: Նա «համաշխարհային թախծի» ռոմանտիկ հերոսն է: «Հարութի հոգու խորքը տխրությունն էր, նրա աշխարհզգացումը՝ տխուր էր»[6],– գրում է Իսահակյանը:

Կարոյի և Հարութի յուրաքանչյուր զրույց վերաճում է խորհրդածության աշխարհի ու նրա գաղտնիքների, հավերժի ու անցողիկի, կատարյալի, գեղեցիկի ու տգեղի, չարի ու բարու, բնության մեծ հրաշքի, ազգի, մարդու, մահի ու անմահության մասին: Եվ քանի որ բազմաթիվ գրառումները չեն սահմանափակվել որոշակի ժամանակահատվածի մեջ, այլ սկսվել ու շարունակվել են հեղինակի ապրած կյանքի հետ՝ մինչև ավարտը, ժամանակի ընթացքում հեղինակի աշխարհայացքում տեղի ունեցած փոփոխությունները բնականաբար անդրադարձվել են հերոսների խոսքի ու մտածողության ձևերի մեջ: Եվ ինչքան երկարել է ժամանակը, այնքան «երկարել» ու խորիմաստ են դարձել Կարոյի ու Հարութի զրույցները: Ստվարածավալ վեպի բազմաթիվ գրառումներում շարունակ քննվել են նույն երևույթի այլևայլ շերտերը, որոնք գնալով այնքան են խորացել, որ ուղղակիորեն դուրս են եկել հերոսների լեզվամտածողության շրջանակներից՝ դառնալով զուտ հեղինակային խոհեր: Տեսնելով, որ երբեմն շատ է

---

2 Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Իսահակյանի ֆոնդ, 313-II, էջ 54:

3 Նույն տեղում:

4 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան. Երևան, 1977, էջ 31:

5 Նույն տեղում:

6 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 383- II, էջ 33:

բարդացրել, Իսահակյանը գրել է, որ պետք է նրանց կերպարները պարզեցնել:

Կարոյի և Հարութի ղրույցները հաճախ տեղի են ունենում բնության գրկում, նրանք բնության հարազատ զավակներն են: Ինչպես Կարոն, Հարութն էլ սովորական մարդ չէ, «խելառ է», նա չի տեղավորվում «նորմալ» մարդկանց համար սահմանված վարք ու բարքի շրջանակի մեջ, նրա արարքներն անսովոր են, տարօրինակ: Մանուկ հասակից չափազանց ուշիմ, հանգիստ ու խելացի երեխան, որ հրաշալի յուրացնում էր Աստվածաշնչի գասերը և պատրաստվում էր հոգևորական դառնալ, մի օր հանկարծ հրաժարվում է այդ ամենից ու եկեղեցու անունն անգամ լսել չի ուզում: Հարութի հետ տարօրինակ բաներ են սկսում կատարվել, նրա երազներում հայտնվում է խորհրդավոր կինը՝ Հրեղենը, որ տանում է Հարութի միտքն իր հետ՝ ուրիշների համար անտեսանելի մի աշխարհ: Անմարմին, երազային այս կինը Հարութի անուրջներում կարծես թե հայտնվում է անսպասելի և պատճառ է դառնում Սուրբ Գրքի ընթերցանությամբ տարված պատանու «խելագարությանը»: Սակայն Հրեղենի ոգեղեն հայտնությունը տեղի էր ունեցել ավելի վաղ, հենց աստվածաշնչյան Սողոմոն Իմաստունի (որին էլ ուզում էր նմանվել Հարութը) չքնաղ Սոմնացու աստվածային գեղեցկության՝ «Երգ երգոցի» նկարագրությունից: Երազից ծնված զգացումի արթնացումը՝ Հրեղենի տեսքով, անդառնալիորեն փոխում է Հարութի կյանքի ընթացքը և տանում է նրան իր առեղծվածային աշխարհը: Անվերջ դեղեցիկին ձգտող նրա հոգին ապրում է խորհրդավոր սիրո անբացատրելի գաղտնիքի մեջ: «... ինձ մի՛ վնտրիր ծաղիկների, աղջիկների, եղնիկների մեջ, չես գտնի, ինձ փնտրիր երազների մեջ»[7],– շշնջում էր երազկինը: Անրջանքից գոյավորված աշխարհում միայն կարող է ամոքվել Հարութի՝ հավերժին ձգտող տառապած հոգին: Նմանօրինակ զգացողության անդրադարձն է Իսահակյանի բանաստեղծական տողը, ուր անրջանքին տրվելու ցանկությունը արդեն հեղինակինն է.

-Եվ առվի խոխո՛ջ, ծառերի ստվե՛ր
Կախարդեն ուշքըս ինքնամոռացման
Ջրքնա՛ղ երազով...[8]

Հրեղենի հայտնությունը՝ երազի աշխարհի կախարդանքը, իրական կյանքի բոլոր եթերային դեղեցկությունների յուրովի արտացոլանքն էր: Եվ այդ պատճառով էլ Հարութը նրան զգում էր ծաղիկների թերթիկների, եղնիկների ու այծյամների վայրի սլացքի մեջ: Ի դեպ, Հրեղենը նույնանում է Իսահակյանի մյուս հերոսուհուն՝ Լիլիթին՝ անհաս ու խորհրդավոր, հավերժ ցանկալի կնոջ իդեալին: Անիրական ու չքնաղ երազը միայն մի տեղ կարող էր ապրել՝ Հարութի հոգում:

Թեև Հարութը սիրում էր հանդիպել գեղեցիկ կանանց հետ, սակայն դա երբեք չի վերածվում սիրո: Վեպի ձեռագրերից մեկում նկարագրվում է, թե ինչպես է Հարութի սիրելի կանանցից մեկը՝ Անուշկան, գալիս ջրաղաց: Ազատ վարքի տեր այս կինը սիրում էր «խելառ» Հարութին և հաճախ էր

---

7 Ավ. Իսահակյան. Երկերի ժողովածու 6 հատորով (այսուհետև՝ ԵԺ). հ. 4, Երևան, 1975, էջ 450:

8 Նույն տեղում, հ. 1, Երևան, 1973, էջ 17:

գալիս նրա մոտ: Անուշկայի և Հարութի հանդիպման այս տեսարանը, որ բնության, կնոջ գեղեցկության, սիրո վայելքի ներդաշնակ միաձուլում է, վեպի գեղեցիկ հատվածներից մեկը կարող էր լինել: Ջրաղացում՝ աղբյուրի ակունքին, Հարութը չինել էր մի փոքրիկ ջրավազան, որի մեջ իրենց արտացոլանքն էին տեսնում շրջապատող ծառերը, արևի ոսկե ճառագայթները և գիշերային երկնքի աստղերն ու լուսինը: Ջրավազանի մեջ Հարութը լողացնում է Անուշկային, և նրա մերկ մարմնի վրա լուսնի գունատ ջողերի մեջ փայլփլում են ջրի աղծաթե կաթիլները: Գեղեցկությամբ արբած Հարութը ուշքի է գալիս միայն այն ժամանակ, երբ լսում է կնոջ քնքուշ ձայնը. «Հարութ ջան, ցուրտ է մի քիչ»: Սակայն սիրո վայելքը չի լցնում Օրթե Հարութի հոգին հրաշքի սպասումով, որովհետև Անուշկան էլ սովորական կին է, որ չի կարող Հրեղեն լինել: Հարութի երևակայության մեջ ստեղծված Հրեղենի հավերժական գեղեցկությունը ծնվել էր անմահության նրա տենչանքից: Հրեղենը ջնջում էր կյանքի ու մահվան սահմանը՝ հաստատելով կյանքի հավերժությունը: «Դուն իմ անմահությունս»[10],– շշնջում էր Հարութը երազի մեջ: Հրեղենի գոյությունը Հարութը զգում էր շոշափելիորեն: Օրթե Հարութի համար երազի աշխարհը իրականի փոխարկելու ցանկությունը այնքան էր մեծ, որ նա հաճախ երազային զգացողությունը փոխադրում էր իրական աշխարհ: Երազը նրա հետ էր երբեմն իրականությունից ստացած զգացողությունների ու ապրումների պահերին: Նա իր երազի կնոջը փնտրում էր ամենուրեք. «Հարութի հուշերը հրեղենի մասին հաճախ ուղղակի իրականության ձև էին առնում, զգում էր հրեղենի ներկայությունը, տեսնում էր նրան, և չէր շարժվում, որ ինչպես երազի մեջ. չզարթնի և չցնդի այս տեսիլքը»[11]: Հոգեբանական այս երևույթը Իսահակյանը փորձել է արտացոլել իրական մի կնոջ՝ Օտարուհու հայտնությամբ: Այս կինը մի անգամ Տեկորով անցել էր, և Հարութը տեսել էր նրան մի քանի րոպե միայն, սակայն «աղջկա աչքերի դյութիչ լույսն ու բոցը Հարութին կախարդեց, գամեց դետնին, անշարժացրեց»[12]: Այս կինն արդեն նման էր Հրեղենին. «Մտքի միջի աղջիկը», իդեալը, որի մարմնացումը տեսավ օտարուհու մեջ»[13]: Օտարուհու գեղեցկությունն այնքան է հուզում Հարութին, որ նրան սկսում է թվալ, թե հենց նա է իր երազի աղջիկը. «Հարութը ուզում էր ընկնել նրա ոտները, համբուրել ոտքի տակի փոշին, կոշիկների ծայրերը, գրկեր ոտները և համբուրեր, աղոթեր, և դարեր, հավիտյան ընկած մնար նրա ոտների տակը...»[14]: Երազ-տեսիլը մարմնավորվում ու իրական է դառնում: Սակայն այս կնոջ շատ արագ անհետանալը նրան նորից ձուլում է երազ-իդեալի մտապատկերին. «Հարութի համար օտարուհին դարձավ երազ, ցնորք, առասպել, անիրական»[15]: Բնության ներդաշնակության մեջ ապրող Հարութը մտածում է, թե կյանքը հավերժ պետք է լինի, այլապես ինչու՞ է Աստված ստեղծել

9 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 286-II էջ 145:
10 Նույն տեղում, 384-II, էջ 5:
11 Նույն տեղում, էջ 23.
12 Նույն տեղում, 313-II, էջ 40.
13 Նույն տեղում, 314-II, էջ 6:
14 Նույն տեղում, 390-II, էջ 24:
15 Նույն տեղում, 380-II, էջ 23:

այս հրաշք բնությունը՝ ծառը, ծաղիկը, աղբյուրը, խոտը, ինչու՞ են թռչունները այսքան անուշ գայլայլում իր այգում, ինչու՞ է շողում արևը երկնքում, և գիշերային երկնակամարում հայտնվում են լուսինն ու աստղերը, ու այս ամենը տրված են մարդուն վայելելու լոկ մի ակնթարթ, լոկ երազի մեջ, իսկ հավիտենական է, անվերջ է միայն մահը:

Կյանքի ու մահվան առեղծվածը հուզել է բոլոր ժամանակների մեծ մտածողներին: Իսահակյանի ստեղծագործության մեջ այն առանձնահատուկ տեղ ունի: Դեռ երիտասարդ տարիքում կյանքի նորոգ ուժով ապրող բանաստեղծը քննում է մահվան թեման՝ իրրև ծանր ու անամոք թախծի արտահայտություն.

Արևելքից մի հավք եկավ
Ոսկի հակինթ թևերով,-
Վառ արևի խորքից եկավ
Աշխարհով մեկ ձայն տալով.

-«Ես եմ կյանքը.- կյանքն է երազ
Մեծ քնի մեջ աշխարհի.
Մարդն է ոգի, մարդն է դողանջ
Մեծ զանգի մեջ աշխարհի»:

Եվ իմաստուն հավքը ճախրեց,
Թռավ գեպի արևմուտք.
Եվ թևաթափ լուռ մխրճվեց
Մահվան ծովում՝ սև ու սուգ...[16]

Եվ չափածոյում, և՛ հատկապես արձակում [«Սաադիի վերջին գարունը», «Անանդան և մահը» (այն սկզբում կոչվել է «Մահը»)] պոետի խոր հոգին կյանք-երազի մեջ տեսնում է մահվան իշխանությունը, որի առաջ ամեն ինչ փոշիանում է ու մոխրանում.

Է՛յ դու մահվան անմահ աշխարհ
Գերեզմանի պես տխուր...[17]

Տիեզերքի պես անհուն հոգի ունեցող մարդը դատապարտված է ոչնչության, անէության: Նրա կյանքը մի ակնթարթ է միայն հավերժական մահի համեմատությամբ: Աշխարհի ստեղծման օրից ի վեր մահվան ուժի առաջ թույլ ու դատապարտված մարդն է՝ իր ցավով, տառապանքով ու անզորությամբ.

Մարդու տենչանքն է՝ հավիտյան ապրել...[18]

Այդ տենչանքն է, որ մղում էր աշխարհի գեղեցկությունը լիաբուռն վայելած Արևելքի բանաստեղծին՝ Սաադիին անհուն կարոտով շշնջալ. «Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով»[19]: Գրականագետ Էդ. Ջրբաշյանը ռոմանտիզմի ավանդների հետ կապված՝ Իսահակյանի ստեղծագործության քննության առիթով դրում է. «...Համաշ-

16 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Եժ. հ. 1, էջ 107:
17 Նույն տեղում, էջ 125:
18 Նույն տեղում, էջ 382:
19 Նույն տեղում. հ. 3, Երևան, 1975, էջ 76:

խարհային թախծի» մյուս աղբյուրը՝ ամենակուլ մահվան, ամեն ինչի անխուսափելի վախճանի գիտակցությունն է, վախճան, որին ենթակա է ոչ միայն մարդը, այլև աշխարհը, արևն ու աստղերը»[20].

Վեպի և՛ մշակված գլուխներում, և՛ ամբողջական հատվածներում, և օրագրային գրառումներում Իսահակյանն անընդհատ անդրադարձել է մահվան թեմային: «Մարդկության ո՞ր ծանր հանցանքի համար բնությունը սահմանել է նրան պատժի գերագույն տեսակը՝ մահվան պատիժը, մահապատիժը»[21],– *գրում է Իսահակյանը: Իր սիրելի՝ «համաշխարհային վիշտը» կրող հերոսի՝ Հարութի տառապագին մտորումներն անվերջ պտտվում են այդ երևույթի շուրջ: Գրառումներից շատերում հերոսների խոսքին երբեմն նախորդելով կամ հաջորդելով՝ ձուլվում է հեղինակի միտքը, ձևակերպումը: Այսպես՝ մի գրառման մեջ հերոսներից մեկը մարդկային կյանքի մեջ ամենակարևոր բանը համարում է գիտությունը, որի միջոցով մարդը կարող է հաղթել բնությանն ու նաև ինքն իրեն: Սակայն հաջորդ տողերում արտահայտված միտքը, որ արդեն հեղինակինն է, դարձյալ չեշտում է մարդու անպաշտպան լինելը մահվան առեղծվածի սարսափի առջև. «...հավատը դեպի գիտությունը մարդուն չի աղատում մահվան երկյուղից: Ամենամեծ վախը չգոյությունն է»*[22]: *Ծաղկաձորում արված մի գրառման մեջ Իսահակյանը մարդկային ճակատագիրը, կյանքը, հանճարի կյանքը համարում է անիմաստ ու սին մի ճանապարհ դեպի կորուսյալ աշխարհ. «Ի՞նչ օգուտ, սովորում ես գիտություններ, լեզուներ, ահադին փորձառություններ, ճամփորդություն, բոլորը ուղեգիդ մեջ, հետո մեռնես և ուղեղիդ մեջ (Կանտի, Նիցշեի, Գյոթեի) որդեր ասլրին և հող դառնա»*[23]:

Վեպի առաջին տարբերակում մահվան մասին Կարոն ու Հարութը քիչ են խոսում: Հետագայում գրված ձեռագրերում (ինչպես «Ասոյի մահը» հատվածում) այս հարցին Իսահակյանը բավականին շատ է անդրադարձել: Հարութի մտորումների կիզակետում մահվան մշտակա ներկայությունն է, որն էլ անվերջ տանջում ու անամոք տառապանք է պատճառում նրան: Մի անդամ արդեն իր համար բացահայտելով աշխարհի ունայնությունը՝ նա այլևս ապրում է վախի ու սարսափի մեջ: Կյանքը նրա համար դառնում է անխուսափելի մահվան տառապագին սպասում, և Հարութը ժխտում է մարդուն ոչնչության դատապարտող դաժան Աստծուն: Ինչպես գրում է գրականագետ Ազատ Եղիազարյանը, «Նա (Հարութը – Ա. Խ.) իր համար հայտնագործում է մահը, որի մռայլ ստվերի տակ առհասարակ կյանքը գունաթափվում, կորցնում է իր հրապույրը»[24]:

Ձեռագրում «Ասոյի մահը» գլխի վերնագիրը բաղկացած է երկու ենթավերնագրերից: «Ասոյի մահը» հատվածում նկարագրվում է դյուղացիներից մեկի մահը, նրա հարազատների ողբը և Կարոյի մտորումները նրա դագաղի մոտ, իսկ մյուս՝ «Ասոյի մահից հետո» հատվածում Կարոն գնում է Հարութի մոտ, հայտնում նրան Ասոյի մահը, և այդ լուրի տպավորութ-

---

20 Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը. Երևան, 1976, էջ 279:
21 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 343-II, էջ 31:
22 Նույն տեղում, 347-II, էջ 9:
23 Նույն տեղում, 348-II, էջ 10:
24 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Ուստա Կարո, էջ 12:

յունից ցնցված՝ Հարութն ընկնում է խորը հուսահատության մեջ, ընկճվում, կորցնում է ինքնատիրապետումը և փորձում ուղեղը շամփրող մահվան միտքը խեղդել օղու օգնությամբ: Մահը միակ իրականն է՝ խորհում է Հարութը, աշխարհն է սուտը, ու սարսափելին այն է, որ նա մարդու հետ ջնջում է ամեն բան, նրա հետքերը մաքրում ու ոչնչացնում, մարդուց հետո մնում է դատարկությունը: Աշխարհի հոգը չէ՝ երբևէ եղե՞լ է այդ մարդը, եկե՞լ է աշխարհ, ապրել, տխրել, ուրախացել:

Եթե Կարոյի համար աշխարհի մեջ ապրած մեկ օրը հազար տարվա կյանք արժե, ապա Հարութի համար հազար տարվա ապրած կյանքը մեկ օր էլ չարժե, որովհետև անխուսափելի մահը մի օր գալու է. «... մեռելի ու ողջ մարդու մեջ զանազանությունը մեկ ժամ է կամ մեկ օր»[25]: Հարութի այս միտքը հարազատ է ժողովրդական հայտնի «մեռավ, գնաց խառնվեց հազար տարվա մեռելներին» արտահայտությանը: Հարութի համար անհասկանալի է Կարոյի փիլիսոփայությունը, թե պիտի ընդունել անխուսափելին ու չմտածել դրա մասին, պարզապես ապրել Աստծո տված կյանքը, վայելել այն: Չնայած Կարոն ինքն էլ հաճախ վհատվում էր այդ մասին մտածելիս, սակայն արագ էլ վանում էր այդ միտքն իրենից: Մահվան տագնապից հուսահատված ու չարացած Հարութը փորձում է տակն ու վրա անել ընկերոջ հոգին, փոխանցել նրան իր սարսավը. եթե այդքան ընդունելի է մահը, ապա ինչու՞ Կարոն իր քարավանով չի եղել Զքաստանում, բայց մեկ է, մի օր նա անպայման կգնա այնտեղ: «...զո՛ւր էդ աշխարքեն հեռու տեղերը կը պտտես»[26],– չարախնդում է նա: Մարդը աշխարհ է եկել միայն մեռնելու համար: Օղուց նվաղած Հարութի ուղեղում աշխարհի դատարկության սարսափն է. «–Կարո, մեռնող Կարո, հող դարձող Կարո ջան, աշխարքը փուչ է, քամի է, քամի ու էգուց էս քամին մեր դերեզմանների վրա պիտի վնգստա, Կարո, քանի մահը կա– աշխարքը չկա, ոնց որ լամբը մարես ու մութն իջնի մինչի հավիտյան»[27]:

Տասներկու ձեռադիր էջ կազմող այս հատվածը[28] մահվան դաղափարի հանդեպ վախի, այդ վախից ծնվող անանց տառապանքի ու անզորության ծանր մտորում է, որ հեգինակը անել քննում էր անվերջ իր հերոսի միջոցով: Ինչքան էլ փորձում էր Կարոյի բերանով տրամաբանական պատասխան գտնել իր պեսիմիստ հերոսի անպատասխան հարցերին, միևնույն է՝ այն չկա, չի ասվում ոչ մեկի կողմից, այդ հարցը տրվում է աշխարհի ստեղծման օրից ու պատասխան չունի: Այս մտայնությունն՝ իբրև վեպի հիմնական թեմաներից մեկը, կարևոր տեղ պետք է գրավեր վեպում: Ձեռագրի վերջում, հավանաբար հաշվի առնելով նյութի խտացվածությունը, Իսահակյանն ավելացրել է, որ պետք է «երկու գիշերվա մեջ բաժանել այս գլուխը»[29]: Վեպի մշակված ինքնագրերից մեկում Հարութը ունայնության գաղափարը բխեցնում է Սողոմոն Իմաստունի «Ունայնություն ունայնության» արտահայտությունից: Հարութի հանդիպումը Սողոմոն Ի-

---

25 Նույն տեղում, էջ 257:
26 Նույն տեղում:
27 Նույն տեղում, էջ 264:
28 «Ասոյի մահը» առաջին անգամ տպագրվել է 2000թ. լույս տեսած Ավ. Իսահակյանի «Ուստա Կարո» գրքում:
29 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 293-II, էջ իգ:

մաստունի հետ դարձյալ նրա տեսիլային երևույթներից է: Բոլոր ժամանակներում մարդը փորձել է հասկանալ աշխարհն իր գաղտնիքներով և կարողանալ գտնել իրեն տանջող հարցերի պատասխանները. սակայն բոլոր ժամանակների քննությունն ի վերջո հանգել է աշխարհի հավերժական սկզբնահարցին՝ ի՞նչ է կյանքը, ի՞նչ է մահը... և աշխարհի մեջ ոչինչ նոր չէ, բոլոր իրերն ու երևույթները ժամանակի մեջ կրկնվում ու հոլովվում են, ամեն ինչ անհաստատ է: Միակ իրականը այդ անվերջ պտույտի մեջ մարդու կյանքի անցողիկությունն է: Մարդը ծնվել է հողից ու հող է դառնում, և այն, ինչ ասել է Սողոմոն Իմաստունը «Հազարանց տարի առաջ», միշտ նոր է՝ «...ունայնություն ունայնությանց.— ամենայն ինչ ունայնություն է. ինչ որ եղել է, նույնը պիտի լինի, ինչ որ գործված է, նույնը պիտի գործվի, և արևի տակ նոր բան չկա»[30]: Մարդու՝ անվերջ չարչրկվող միտքը տառապանք ու ցավ է ծնում հենց միայն մարդու համար. «...աստված այս չար զբաղումը տվեց մարդկանց որդիներին արևի տակ զբաղվելու համար»[31]: Հարութի երազային հանդիպումը Սողոմոն Իմաստունի հետ ավարտվում է գիտակցական այսպիսի զգացողությամբ՝ պետք է հաշտվել անխուսափելիի հետ և ապրել իրեն տրված ժամանակը լիարյուն կյանքով: Սակայն տեղի է ունենում հակառակը: Միտքն անվերջ պտտվում է սևեռուն մի գաղափարի շուրջ՝ մահվան: Հարութը եզրակացնում է, «...իմաստության ուղն ու ծուծը մահն է, որ կա, մահն է, որ աշխարհքը ունայն կդարձնե»[32]: Մի այլ գրառման մեջ Հարութի սևեռուն մտային խոհը Իսահակյանն այսպես է բնութագրում. «Հարութի մտքերի աշխարհը կենդանացավ այդ մահ գաղափարի շուրջը, որպես առանցքի շուրջ- ինչ- որ անում էր, այդ գաղափարից էր ղեկավարվում, այդ էր շաբժում նրա անիվները»[33]:

Վեպի առաջին շրջանի ինքնագրերից մեկում նկարագրվում է Հարութի և Կարոյի տեսիլքներից մեկը, վերնագրված՝ «Աշխարհի տեսիլը»: Սա մի սարսափելի հոգեվիճակ է, որի ընթացքում, ուղեղային մորմոքի պահին հերոսները ամբողջությամբ տրվում են մահվան սարսափին. հայտնվում է մանգաղը ձեռքին Ազրայիլը և հնձում, ոչնչացնում ու ամայացնում իրեն շրջապատող կյանքը: Մասիս լեռան գլխին կանգնած Հարութն ու Կարոն տեսնում են, թե ինչպես է մահվան հովտի մեջ կյանքը հալվում ու անէանում Ազրայիլի ճիրաններում: Ազրայիլը չի խնայում ոչ ոքի, նա ամենուր է, կյանքի ամեն մի րջջի մեջ, ամեն պահ, ամեն րոպե. «Ազրայիլը վերջին անգամ մանգաղը քաշեց և վերջին անգամ աշխարհի մեջ եղած ամեն բան ու սարեր, ծովեր, գետեր, քարափներ իրար վրա վլան, փոշի դառան, ցրվան երկրի վրա ...Մեռած, հող դարձած աշխարհի փոշին մաղվում էր բարակ անձրևի պես նրանց վրա»[34]:

Մահի վերաբերյալ Հարութի դատողություններին նվիրված տարբեր տարիների բազմաթիվ գրառումների դասակարգումը ստեղծում է այդ թեմայի շուրջ մտածական այն հայեցակարգը, որ Իսահակյանը նպատակ է

30 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, ԵԺ. հ. 4, էջ 470:
31 Նույն տեղում:
32 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. ԵԺ. հ. 4, էջ 471:
33 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 330/3-II, էջ 27:
34 Նույն տեղում, 292-II, էջ 3:

ունեցել ներկայացնել իր հերոսի տեսիլների ու դատողությունների միջոցով: Հարութի համար անհասկանալի՝ ինչու՞ է մարդը մեռնում հարցը պատճառ է դառնում հարցերի մի ողջ շղթայի. եթե կա մահը, ապա ինչու՞ է մարդը ծնվում, ո՞րն է կյանքի ու մահվան նպատակը, և այս ամենից հետո ո՞րն է վերջապես աշխարհի գոյության իմաստը: Այս հարցերի մեջ Հարութը երբեն փորձում է գտնել իր պատասխանները: Նա համոզված է, որ կյանքի նպատակը մահն է: Սակայն այս դատողությունից Հարութի գլխում ծնվում է մի ընդհանրացում ևս՝ մարդը դադարում է մտածել մահի մասին, երբ ուրախ է: Ուրախությունը մարդուն ազատում է հոգսից, մաքրում նրա միտքը իրեն տանջող հարցերից, և նա այդ ժամանակ միայն մի բան է ուզում, որ իր ուրախությունը անվերջ լինի: Ցանկությունից զուրկ մարդը կատարյալ երջանիկ մարդն է, իսկ դրախտը « երջանկության վայր է. երանության երկիր»[35]: Ի տարբերություն սրա՝ մարդը տխրության մեջ նպատակ է ունենում, նա ցանկանում է հեռացնել իրենից ցավը, վիշտը և ուրախությունը դարձնել իրենը: Ըստ Հարութի՝ «Ուրախության նպատակը՝ ինքը ուրախությունն է»[36]: Սակայն մարդու ուրախության ղդացումը մթագնվում է մահի գիտակցումից: Եվ այս դատողությունների շղթայում Հարութը հանգում է հետևյալ փիլիսոփայությանը. «Ուրեմն երջանիկ լինելու համար պիտի անմահ լինել»[37], իսկ քանի որ անմահությունը վերապահված է միայն Աստծուն, ապա պետք է. « Անմահ լինելու համար աստված լինել»[38], սակայն քանի որ մարդը մահկանացու է, Հարութը, շարունակ տարուբերվելով կյանքի ու մահվան, դոյի ու չգոյի, երջանկության ու ցավի, ոչնչի, անէության մասին իրարամերժ դատողություններում, որոշում է, որ մարդու ամենաերանելի վիճակը անգիտության մեջ ապրելն է, երբ նա ոչինչ չի զգում ու մտածում: Նա երջանկություն է համարում քնելը, «նորեն քնելը»: Եվ եթե քնելը երջանկություն է մարդու համար, ուրեմն՝ «Մենք էն ժամանակ ենք բախտավոր, երբ չկանք, երբ գոյություն չունենք», ու հեգնանքով դարձյալ հանգում է մահի հզորության ու աշխարհի ունայնության ցավագին խոհին. «Տեսնու՞մ ես, ինչ բան է աշխարհը.— էնպես բան է, որ չլինելը չնորհ է, բախտ է»[39]:

Հարութն աշխարհը և իրերը քննում է ես-ի տեսանկյունից. աշխարհը կա, եթե կա ես-ը, աշխարհը գոյություն չունի առանց ես-ի: Ես-ից հետոն սուտն է, հնարովին, ո՞վ կարող է ասել, թե հետոն է ճշմարիտը՝ ոչ ոք, և ուրեմն աշխարհը կարող է շարունակվել այնքան ժամանակ, քանի կա ես-ը. «Իմ ծնած օրը ստեղծվեց աշխարհը, իմ մեռած օրը կործանվեց աշխարհքը»[40]: Տեսնելով մեռած մի դյուղացու՝ Հարութը մտածում է. «Էնոր համար էս սհաթին ողջ աշխարհքն էլ բլավ»[41]: Աշխարհի նմանօրինակ ընկալումն Իսահակյանի չափածոյում ձևակերպվել է այսպես.

Տիեզերքն այս անսահման

35 Նույն տեղում, 315/1-II, էջ 19:
36 Նույն տեղում:
37 Նույն տեղում, էջ 20:
38 Նույն տեղում:
39 Նույն տեղում, 382-II, էջ 51:
40 Նույն տեղում, էջ 50:
41 Նույն տեղում, 330/1-II, էջ 13:

Իր ծանրությամբ ահագին
Կախված է սոսկ մի մաղից,-
Եվ այդ մաղն է իմ հոգին[42]:

Փիլիսոփայական նույն սկզբունքով Հարութի համար բնությունը, նրա երևույթները շնչավորված են, անձնավորված, բնությունը վերաիմաստավորվում է նրա զգացմունքային ընկալումների միջոցով: Հարութը խղճում է գրսում միայնակ վայող քամուն և խնդրում Կարոյին հոլիկի դուռը բաց թողնել՝ նրան ներս առնելու ու տաքացնելու համար: Աստղը, ըստ Հարութի, մահացողի վերջին շունչն է: Երիտասարդ Իսահակյանը «Հիշատակարանում» այսպիսի գատողություն էր անում. «Մեր հոգու տրամադրության գույնով է երևում աշխարհը, կյանքը և երևույթները...»[43]:

Աշխարհն այսպես ընկալող Հարութը պարզապես չի կարող հավատալ հոգու դոյությանը, աշխարհն անսահման սիրող Հարութն ուզում է նրա մեջ հավերժ ապրել, հավերժանալ, իսկ եթե հոգու գոյությունը ճշմարտություն է անգամ, նա չի պատկերացնում այն առանց մարմնի, որի մեջ բնակվում է հոգին այս աշխարհում, մարմնից դուրս հոգին անձև մի էություն է, ու չգիտես էլ, թե ինչ է այդ. «...ինչի՞ս է պետք հոգին առանց մարմնի, ինչո՞վ վայելիմ: Թող հրեգենիս ինձի տան, ես բոստանիս մեջ-անմահ, անմեռ ապրիմ, հավիտյան: Ուրիշ դրախտ չեմ ուզե...»[44]: *Հոգու մասին կասկածով մտածող Հարութը նաև զարմանում է, թե եթե այն գոյություն ունի, ապա այս անծայր տիեզերքում, ուր անթիվ արևներ ու աստղեր կան, հոգին ինչպե՞ս պետք է «իր գլուխը պահե» և այն էլ հավիտյան: Նա չի հասկանում, թե որն է դրա իմաստը և նպատակը, ու ավելի է խճճվում այն մտքերի մեջ, որոնք հետևում են դրան. իսկ կենդանիների, միջատների, բույսերի հոգինե՞րը, նրանք ի՞նչ են անում: Իր այս անպատասխան հարցերից հետո Հարութը մտածում է, թե աշխարհում, այնուամենայնիվ, երբևէ հորինված ամենագեղեցիկ հեքիաթը հանդերձյալ կյանքի, անմահության մասին հեքիաթն է: Նա գտնում է, որ այդ հեքիաթին հավատացողը ամենաերջանիկ մարդն է: Քրիստոնեական հարության դաղափարին չհավատացող Հարութը պարզապես սիրում է կյանքը և ուզում է ապրել առանց մահվան սարսափի, որն սպանում է կյանքը. «Ես մեռնել չեմ ուզում...և էլ ածու*[45] *խոստացածին չեմ հավատում»*[46]: *Նրա կասկածները Աստվածաշնչի հանդեպ առաջ եկան նաև Սուրբ Գրքից չեղվող աղանդներին ու ուսմունքներին ծանոթանալուց հետո, որոնք Հարութի խորհող հոգին խռովեցին: Հարութի մտորումներում Քրիստոս ե Աստված հասկացությունները չեն նույնանում: Նա հստակ սահմանազատում է այդ գաղափարներն իրարից: Նրա եզրակացությամբ Քրիստոսն ավելի սիրելի ու հասկանալի է իրեն, որովհետև նա մարդու կյանքով ապրեց, նրա մեջ կար «ածու հոգին, խելքը, հանճարը»*[47]: *Նա մարգարե էր, քարոզիչ և նահատակվեց, ուրեմն նա Աստված չէր, մահկանացու էր: Ժխտելով Աստծու*

---

42 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Եժ. հ. 1, էջ 340:
43 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան. էջ 212:
44 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 315/1-II, էջ 13:
45 Ավետիք Իսահակյանը իր գրառումներում Աստված բառը գրում է ած ձևով:
46 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 319-II, էջ 9:
47. Նույն տեղում, 382-II, էջ 87:

խոստացած անդրշիրիմյան աշխարհի դաղափարը և մենակ մնալով մահվան սարսափի առաջ՝ Հարութը չի կարողանում դիմանալ միայնակ հոգու իր տառապանքներին: Նա խորհում է, որ այսպիսի տառապանքներ տվող Աստվածը չի կարող բարի հայր լինել, նա չար Աստված է: Մարդն ուզում է երջանիկ լինել, և քանի որ այդ երջանկությանը հասնելու նրա ցանկությունը բախվում է խոչընդոտների, այդ ձգտումը դառնում է տառապանք: Իսկ եթե մարդը հասնում էլ է իր երազածին, չքանում է վայելքի ղդացողությունը, և ծնվում է նոր ցանկություն՝ հաջորդներին հասնելու: Շարունակական այս ընթացքը մարդու կյանքը դարձնում է տանջալից ու անվերջ մի պայքար ցանկությունների համար, սա էլ ի վերջո դալիս հասնում է վերջին՝ մահին, ուրեմն մարդն իրեն տրված ժամանակի մեջ անդամ չի կարող երջանիկ լինել, իսկ մահվան հանդեպ ունեցած վախից էլ նա միշտ ապրում է թունավորված գիտակցությամբ. «Հազար կյանքի ուրախությունը մեկ մահի առաջ ոչինչ բան է»[48]: Հարութը եզրակացնում է՝ Աստված չար է:

Մահից վախենում է նաև Կարոն, բայց դա չի կարող պատճառ դառնալ, որ նա Աստծուն չար համարի: Նա է ստեղծել աշխարհն ու մարդուն, և անքննելի են նրա գործերը. «... հավատաք, որ ―ած ստեղծել է, չի կորցնի»[49]: Ահա այդ իսկ պատճառով էլ Կարոյի համար մահը դեռ ավարտը չէ, վերջը, «հեչը» չէ: Նա հավատում է հարության դաղափարին. հոգու անմահությանը, դրախտի և դժոխքի դոյությանը: Եվ այդ պատճառով էլ Աստծու տված այս կյանքը պետք է ապրել թեթև սրտով, բարին արարելու հավատով. «...մի վախնար, վախը լավ բան չէ, վախից մարդ ավելի շուտ կմեռնի. մահի սարսափը ո՞րն է, անուն թող, հիշատակ թող»[50]: Կարոն կարծում է, թե մահը, այնուամենայնիվ, անհրաժեշտություն է, քանզի նա մարդու երբեք չբավարարվող էությանը հանգիստ է բերում. «... թե չէ՝ մշտական կյանքը ի՞նչ է – վաղել ու ողբալ, երբեք չհասնել ուզածին և տանջվել»[51]:

Սեփական կյանքի հանդեպ մահվան վախը չէ միայն Հարութին ցավ պատճառում: Հարութը սիրում է մարդուն, նրա հոգին էլ Կարոյի նման բաց է ուրիշների համար: Իրեն չրջապատող մարդկանց ցավն իրենն է: Նա կարեկցում է Աստծո ձեռքին խաղալիք դարձած մարդկանց, որովհետև ցավի այն զգացումը, որ ամբողջ հոդով ապրում է ինքը, ապրում են և նրանք, իսկ այդ զգացումը, միևնույն է, ավարտվում է մահով: Տեսնելով Աստծո ստեղծած աշխարհում տիրող անարդարությունն ու դաժանությունը՝ Հարութը ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչու՞ է Արարիչն այսքան անկատար ստեղծել աշխարհը, ինչու՞ են սուտը, վատը, ստորը, իշխանությունն ու իրավունք ունեցողը դաժանորեն սպանում, անիրավում խեղճին ու թույլին, աշխարհը փողի իրավունքով է կառավարվում:

---

48 Նույն տեղում, 317-II:
49 Նույն տեղում, 372-II, էջ 15:
50 Նույն տեղում, 346-II, էջ 5:
51 Նույն տեղում, 349-II, էջ 5:

Եթե Հարութի համար անհասկանալի է, թե ինչու՞ է Աստված ստեղծել չարը, Կարոն ունի նաև սրա պատասխանը. «... իր գիտնալիք բանն է. թե ինչու է ստեղծել չարը. քանի որ ինքը բարի հայր է. ասել է. չարն էլ բարու համար է»[52]: Մարդը կարող է խուսափել չարից. զանազանել չարն ու բարին իրարից, որովհետև ամենաբարի Աստված «մարդուն խելք է տվել»[53]: Հարութը, իհարկե, համաձայն չէ. որովհետև չարը մարդու գլխին կարող է կախվել անկախ իր կամքից: Եվ ինչքան էլ աշխարհը մեծ է ու անսահման, անիմանալի, բնությունը կատարյալ ու հավերժական. սակայն կարևորը մարդն է, այս անսկիզբ ու անվերջ աշխարհը առանց մարդու «ոչնչից ոչինչ է», այսպես է մտածում Հարութը: Համաշխարհային թախիծը կրող հերոսի ցավը, տառապանքը հեղինակը գրառումներից մեկում այս կերպ է բնութագրում. «Կարեկցությունը Հարութի հոգու էությունն էր, կարեկցությունը բոլոր արարածներին- նրանք ցավ են զգում և մեռնելու են: Տիեզերական վշտազգացում և տիեզերական խղճահարություն»[54]: Այն, որ աշխարհը անկատար է, դրա համար մեղավորը աշխահում տիրող չարը չէ, գտնում է Հարութը, այլ այն ստեղծող ամենազոր արարիչը. «Ստեղծողն է մեղավոր, արարածներն անմեղ են»[55]: Այդ պատճառով էլ, ըստ Հարութի, թուրքը, գայլը, օձը մեղավոր չեն. «...օրթե ած նրանց էդպես է ստեղծել, ուրիշ տեսակ չեն կրնա էղնի»[56]: Եթե Աստված գիտե, որ իր ստեղծած էակը պետք է չարիք գործի, ինչու՞ է նրան փորձության ենթարկում, այնինչ Արարիչը պետք է նրան այնպիսին ստեղծեր, որ նա պարզապես չցանկանար չարիք գործել: Նա մտովի համաձայն չէ իր ուսուցչի՝ քահանայի հետ, որն ասել էր, թե Աստված մարդուն ստեղծել է ազատ կամքով: Հարութը առարկում է. Աստված մարդուն կարող էր ստեղծել «հղոր կամքով», այնպիսին, որ նա չենթարկվեր չարիքի ու փորձության: Հարութը լավ գիտե Աստվածաշնչի ձևակերպումը, թե առանց Աստծու կամքի մարդու գլխից մազ չի ընկնում: Հարութի եզրակացությունը սրանից հետո ավելի քան համոզիչ է. «...ուրեմն ամեն բանի մեղավորը, պատճառը ած է»[57]: Այսպիսի դատողություններով Հարութը բացառում է մարդու կամքի ու գիտակցության, նրա բարոյական չափանիշների դերը: Եվ այսպես՝ մարդու անկատար լինելու մեջ միմիայն մեղադրելով Աստծուն՝ նա նաև ուղղակիորեն նույնացնում է չարիք և թուրք հասկացությունները: Թուրքը մեղավոր չէ, որ սպանում է, եզրակացնում է Հարութը, մեղավորը նրան այդպիսին ստեղծող Արարիչն է: Այստեղ պետք է նշել, որ, ըստ հեղինակի նախնական մտահղացման, աշխարհի գաղտնիքը քննող այս հերոսը կարծես չէր պատկանելու որեէ ազգության: Նրա տառապանքը բոլոր ժամանակներին ու ազգություններին պատկանող մարդու ցավն

52 Նույն տեղում, էջ 3:
53 Նույն տեղում:
54 Նույն տեղում, 346-II, էջ 5:
55 Նույն տեղում, 315/1- II, էջ 16:
56 Նույն տեղում:
57 Նույն տեղում, 319-II, էջ 5

է ու տառապանքը: Նրան չէր հետաքրքրում հայրենի երկրի ու նրա զավակների ճակատագիրը: «Հարութը ազգայնական չէ,– գրում է Իսահակյանը,– նրա հոգին հանրամարդկային է, խղճում է չա՜ռ հայերին, բայց առհասարակ մարդուն համարում է գազան. իրար միս ուտող, ազատ Հայաստանում էլ մարդիկ իրար պիտի ուտեն...»[58]: Ահա այս տրամաբանությամբ էլ Կարոյի հորդորին՝ միասին Հայաստան գնալ «դաշնակ» դառնալ, Հարութն այսպես է պատասխանում. «Հայ ու սուլթան եղած-չեղած աշխարհքի համար. ես քեզի մեծ բաներ կասիմ. դու պզտիկ»[59]:

Սակայն, ամենայն հավանականությամբ, ուշ շրջանի գրառումներում Իսահակյանը որոշում է, որ իր հերոսի խոհերում կարևոր տեղ պետք է ունենա և սեփական ժողովրդի ցավի ընկալումը: Աստծու հանդեպ նրա մերժողական վերաբերմունքի մեջ սա ևս կարևորվում է. «Շատ անհրաժեշտ է վեպի ընթացքի համար, որ Հարութը բավական իրազեկ լինի թրքաց հայերի կացությանը, ջարդերին, սարսափներին: Այդ ամենը նա գյուրին կիմանար երթևեկող դյուղացիներից, գաղթականներից (ընդծումը հեղինակինն է – Ա. Խ.), ճամփորդներից: Իրենց տունը և իր մոտ ծառայում էին թրքահայ պատանիներ, որ փախած էին Թուրքիայից, Հարութը պետք է գիտենա, որ իր տեսիլքների մեջ և վերջապես նախկին իր զրույցների և հոգեբանության մեջ երևան պատկերներ, դեպքեր...»[60]: Եվ Հարութի մտապատկերում ծնվում են մեկը մյուսից զարհուրելի պատկերներ հայոց սարսափից. «...թուրքերը երեխաներին ողջ-ողջ դցում էին կրակի մեջ, գլուխները զարկում էին քարերին, կանանց փորերը ճեղքում, երեխան հանում, թրի, նիզակի ծայրին ցույց տալիս աշխարհին»[61]:

Այս կարգի դրառումները եզակի չեն «Ուստա Կարոյում»: Հարութի աստվածամերժության համոզմունքի մեջ կարևոր դեր է խաղում նաև այս հարցը, թե ինչու է ամենակարող Տերը անպատիժ թողնում թուրքին, և ինչո՞վ են արդյոք հայերը մեղավոր: Հակասության մեջ մտնելով Աստծո ստեղծած աշխարհի հետ, հիասթափվելով նրա անկատարությունից՝ Հարութը հակադրում է նրան իր մտապատկերում կառուցածը. եթե ինքը Աստված լիներ, ապա իր աշխարհում ամեն ինչ կլիներ կատարյալ ու անթերի, ամեն ինչ կստեղծվեր մարդուն երջանկացնելու համար, իր չինած դրախտ-աշխարհում մարդը կվայելեր կյանքը «անմեռ, առանց ծերանալու»[62]: Այնտեղ ոչ մի արդելված պտուղ չէր լինի, ցավը, հիվանդությունը, դաժանությունը տեղ չէին ունենա: Որպեսզի ստեղծի այդ հրաշք աշխարհը, նա գտնում է, որ պետք է իմաստուն լինի. այնպես, ինչպես Սողոմոնն էր, կարողանա այնպես քննել աշխարհի «տակն ու վրեն, սկիզբն ու վերջը»[63], որ հասկանա, թե Աստված ինչպե՞ս, ինչո՞վ ստեղծեց այս ամենը: Ահա այդ ժամանակ ինքն էլ արդեն Աստված կդառնա ու կոչնչացնի եղածը՝

58 Նույն տեղում, 313-II, էջ 50:
59 Նույն տեղում, 286-II, էջ 158:
60 Նույն տեղում, 369-II, II, էջ 57:
61 Նույն տեղում, 376-II, էջ 18:
62 Նույն տեղում, 319-II, էջ 6:
63 Նույն տեղում, էջ 11:

նորը, կատարյալը ստեղծելու համար. «...քանի որ փորձված եմ, էս աշխարհքի գեշ կողմերը գիտեմ, ած անփորձ էր»[63]:

Ահա այսպես իր տեսության մեջ հասնելով Աստծու ժխտման գաղափարին, իր անուրջներում ստեղծելով մարդու հավերժական երազանքի անմահ աշխարհը, Հարութը տենչում է առաջին հերթին մարդու կամքի տիեզերական անսահմանափակ ազատության: Նա ուզում է, որ մարդն ապրի բացարձակ ազատ ու անկախ: Հարութն ուզում է Աստված գառնալ, քանի որ Աստծու գաղափարն ընկալում է ոչ թե իբրև կատարելություն, լույս ու մաքրություն, այլ որպես անկատար ու դաժան արարիչ դրան հակադրելով մահկանացուի իր ես-ը, որն ավելի իմաստուն է, բարի ու կատարյալ և այդ իսկ պատճառով էլ իրավունք ունի չընդունելու անկատար Աստծուն: Մինչև այն պահը, քանի դեռ Հարութի համար գոյություն ունի Աստված թեկուզև չար և՛ կյանքն ու մահը, և՛ բնությունը, և՛ անհուն տիեզերքը ինչ-որ կերպ ընկալելի են նրան: Ամեն ինչ ունի սկիզբ, և սկիզբը ամենակարող Արարիչն է: Ողբերգությունը խորանում է նաև այն գիտակցությունից, թե անվախճան ու անսկիզբ տիեզերքը գոյություն ունի ինքնին: Գրառումներից պարզ է դառնում, որ Իսահակյանն իր վեպի հյուսվածքում փորձել է ստեղծել մի նոր կերպար՝ խելացի ու հայրենասեր ինժեների կամ ճարտարապետի կերպարը, որը որոշակի ազդեցություն է ունենում Հարութի աշխարհընկալման վրա: Վերջին տարիների գրառումներում Իսահակյանը չափազանց շատ է անդրադարձել նրանց խոսակցություններին: Առաջին անգամ Հարութը նրանից է լսում, որ տիեզերքում ոչինչ կայուն չէ. ամեն բան հոսում է, քայքայվում, ենթարկվում ձևափոխության: Այս միտքը գտնում է իր արտահայտությունը նաև Իսահակյանի բանաստեղծության մեջ, սակայն առավել ընդվզումի երանգով.

Իրերի հոսման փաստի հետ
Չհաշտվեցի ես երբեք...[65]

Այդ ձևափոխությունը, ըստ ինժեների, բնության «նյութ-ուժից» է: Ուրեմն ոչինչ հավերժական չէ բնության մեջ. «ժայռերը, երկաթը սրանք էլ ջրի պես հոսում են, գոլորշիանում են (թեև չենք տեսնում), բայց քայքայվում են և ուրիշ բան են դառնում»[66]: Եվ իբրև միակ հիմնական այս անվերջ հոսման ընթացքի մեջ մնում է «նյութ-ուժը», ժամանակը և տարածությունը»[67], որոնք իրենց խորհրդավորությամբ ու առեղծվածով այնքան էլ հասկանալի չեն իրեն: Նշանակում է մարդկային գիտակցությունը ի զորու չէ հասկանալու բնությունը, կյանքը, հոգին... Մեկ ուրիշ գրառման մեջ ինժեները տարածության գաղափարը բացատրում է՝ իբրև «եթերով լցված մի էություն»[68], իսկ այդ եթերը, ըստ նրա, ուժ է, որ միաժամանակ «նյութ է, առանց նյութի ուժ չկա» և հակառակը... Հարութի փիլիսոփայական մտորումներում ժամանակ և տարածություն հասկացությունները հաճախ են հանդիպում:

---

64 Նույն տեղում:
65 Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Եժ. հ. 1, էջ 308:
66 ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, 404-II, էջ 10:
67 Նույն տեղում:
68 Նույն տեղում, էջ 27:

Իր խորհրդածություններով ինժենները Հարութի միտքը խճճում, տարօրինակ բաներով է լցնում. այս ամենից Հարութը հանգում է հետևյալ դատողությանը. «...կնչանակե՞ ած այդ նյութից դուրս է. այն ժամանակ պիտի ասել, որ նյութը սահմանավոր է, որովհետև՞ ած նրա մեջ չէ. նրա շուրջն է. ուրեմն՞ ած նյութից դուրս տարածվող էությունն է, որ անսահման է, իսկ նյութը նման է մի կղզու՝ ընկած անսահման ծովի մեջ, որ աստվածություն է»[69]: Այս և նման գրառումները ցրում են մեր նախնական պատկերացումները Հարութի թեկուզև կարդացած, սակայն հասարակ գյուղացի լինելու մասին: Հարութը բարձր բանականությամբ օժտված կերպար է:

Ահա այսպիսի գրառումներով Իսահակյանը տարիների ընթացքում թղթին էր հանձնում իրեն զբաղեցնող խոհերն ու մտածումները: Այս կարդի դատողություններն են, որոնք բնական սահմաններից հեռացնում էին հերոսների կերպարները, և հենց այդ պատճառով Իսահակյանն այսպիսի գրառում է անում. «առհասարակ բնական գրել, համոզիչ, Հարութին դուրս չբերել մի զարգացած <...> կամ Մեֆիստոֆել, կամ Մանֆրեդ: Թերևս հին կոնցեպցիայով գրել, 1910 թվի, առանց քաղաքացիների մասնակցության, միայն իր միջավայրի ազդեցությամբ...»[70]: Սա դրվել է ավելի ուշ, քանի որ մի այլ գրառման մեջ Իսահակյանը որոշում է, որ իր հերոսը Ֆաուստ է, Մեֆիստոֆել[71]: Սակայն հետագայում փոխում է միտքը, որովհետև այս դեպքում նրա հերոսը իր միջավայրի ու իր ապրած պայմանների համար խիստ անբնական, օտար է դառնում: Ինժենների այս դատողություններից, թե Աստված չկա, և բնությունն իր հավերժական ընթացքի մեջ ինքն իրեն կերտվում է, տարրալուծվում, քայքայվում ու նորից վերակերտվում, Հարութը ծանր հոգեվիճակների մեջ է ընկնում: Տեսնելով այդ՝ ինժենները նրան խորհուրդ է տալիս այս ամենի մասին մտածել այնպես, ինչպես ինքն է ցանկանում, եթե ուզում է, թող ընդունի, որ տիեզերքը իր այս բազմազանությամբ ոչնչից ստեղծել է Աստված: Ի վերջո՝ դա խղճի հարց է: Ինժենները նրան բացատրում է իր դատողությունների բարոյական կողմը. «... պետք չէ մտածել տիեզերքի մասին, այլ դառնալ մարդկանց մոտ – դա է մեր աշխարհը. այդ աշխարհը կարգի բերել, չարիքը ջնջել, խղճալ, օգնել իրար և ստեղծել մեր մշակույթը, ուրախ լինել, զվարթ, մնացածը մեզնից անկախ է»[72]: Եվ սա է մարդու ազնիվ ապրելու չափանիշը, ու պետք չէ միտքը չարչարել Աստծո կամ սատանայի դոյության կամ չգոյության հարցերի վրա. «... Աստված չկա, սատանա չկա, սրբություն չկա, բացի մի սրբությունից. այն է, որ օգնել խեղճին. գթություն, գթություն–ահա կրոնը»[73]:

1931 թ. մի գրառման մեջ ինժենները Հարութի հետ զրույցի ընթացքում չի կարողանում բացատրել, թե ի՞նչ է նյութը՝ ասելով, թե դրա էությունն

69 Նույն տեղում, էջ 24:
70 Նույն տեղում, 346-II, էջ 13:
71 Որոշ գրառումներում Իսահակյանն իր հերոսին հաճախ է նույնացնում Մեֆիստոֆելի հետ՝ տալով հետևյալ բացատրությունը. «Մեֆիստոֆելը (սատանան) պեսիմիստ է, չհավատացող, կասկածող, ծաղրող, քննող, հետաքննող (ԳԱԹ, 376-II, էջ 18):
72 Նույն տեղում, 404–II, էջ 18:
73 Նույն տեղում, էջ 20:

անըմբռնելի է, անհասկանալի: Հարութը, որն ընդունում է Աստծո գոյությունը, ունի իր պատասխանը՝ «միտք է, միտք ածը»՝, և այդ պատճառով էլ Աստված է ստեղծել նյութը, այլապես ինչպես կարող էր այդ նյութը գառնալ «արև, ջուր, լույս, խավար, հող, բույս, կյանք, մարդ, խելք ու լեզու ...ես...գու»[75]: Չկարողանալով տալ Հարութի այս հարցերի պատասխանները՝ ճարտարապետը որոշում է, որ Աստծո գաղափարի ընդունումը մարդկության մեծագույն գյուտն է. «...առանց այդ գյուտի, տիեզերքը մի կայծ է, մի մեքենա է դառնում, մի աննպատակ գործ, անիմաստ և մարդը իր գիտակցությամբ տիեզերքի մեջ ամենից թշվառ արարածը, սարսափելի թշվառ, մահվան երկյուղով բռնված, նրա բոլոր գործերը իզուր, ինքը որբ, անտեր, այս անծայր, անգլուխ, անտեր տիեզերքում, որն իր ներդաշնակությամբ հանդերձ մի քաոս է... խելագարի զառանցանք ... ես այս մասին երբեք չէի մտածել...»[76]: Սակայն այս ամենից Հարութի որոնող միտքը ավելի շատ է տրվում իր անվերջ ու անպատասխան հարցերի քննությանը: Հարութի եզրակացությունը մեկն է՝ կա Աստված, այդ Աստված սկիզբն է ու ստեղծողը մնացած ամեն ինչի: Նա է արարել կյանքն էլ, մահն էլ, բարին էլ, չարն էլ: Կյանքի սերն ու այն կորցնելու անվերջ վախը, որի պատճառով էլ արժեզրկվում է այդ կյանքը վայելելու հաճույքը, Հարութի երկփեղկված ներաշխարհն անընդհատ խռովքի մեջ էին պահում: Նա պետք է ունենա իր մեջ Աստծո գաղափարը, պատճառը, որի դեմ պետք է բողոքել, ըմբոստանալ, կռիվ տալ և ապա ժխտել: Աստծո գոյությունը հասկանալի է դարձնում տիեզերքի գոյությունը, Աստծո չգոյությունը անսահմանի, անըմբռնելիի առաջ նրան վախեցնում է, անորոշության մեջ պահում, և մահը՝ անգոն դառնում է միակ տիրակալը տիեզերական անհուն ու անսահման գոյի մեջ: Իր անվերջ տարուբերումների մեջ Հարութը որոշում է. «Եթե ած կա, բայց նա չար է և հզոր, ուրեմն մարդուն նա պետք չէ: Եթե ած կա, բայց բարի է և անզոր, դա էլ մեզ պետք չէ: Եթե ած չկա ... ուրեմն մարդը բոլորովին թշվառ է, աշխարհը անպետք, դաժան, կործանելու արժանի»[77]: Այսպիսի մտորումները Հարութին, ի վերջո, հանգեցնում են աշխարհի առեղծվածային անբացատրելիության. «Ոչ ածու միջոցով կհասկացվի աշխարհը և ոչ էլ առանց ածու միջոցով»[78]:

Այսպիսով, ի դեմս Օրթե Հարութի՝ Իսահակյանը փորձել է կերտել մտածող, քննող ու կասկածող հզոր անհատի դրական կերպարը, և անկախ նրանից՝ վեպն ավարտված է թե ոչ, սա նոր ու մնայուն կերպար է հայ դասական արձակի պատմության մեջ:

74 Նույն տեղում, 292-II, էջ 3:
75 Նույն տեղում,
76 Նույն տեղում:
77 Նույն տեղում, 389-II, էջ 8:
78 Նույն տեղում:

ИЗ ИСТОРИИ СОЗДАНИЯ РОМАНА АВЕТИКА ИСААКЯНА "УСТА КАРО"
(Жизненная философия Орте Арута)

АНЖЕЛА ХОРЕНЯН

Р е з ю м е

В произведениях Ав. Исаакяна особое место занимает незавершенный роман "Уста Каро". Роман был задуман как полотно, отражающее общественно-политическую жизнь армянского народа конца XIX – начала XX века и палитру его быта и нравов, психологии и мировоззрения народа. В образе главного героя Уста Каро воплощен образ народа, а в образе его сподвижника Орте Арута – нравственные искания личности. В настоящей статье предпринята попытка, классифицируя записи разных лет, представить на суд читателя жизненную философию Орте Арута, образ его мыслей. Этот герой романа задумывается о мире и его тайнах, о добре и зле, о жизни и смерти. Скоротечность жизни, отрицание смерти рождает неизлечимую боль в его душе. Не в силах примириться с мыслью о смерти, он пытается понять ее сущность и в конце концов доходит до того, что отвергает Бога. Арут представляет его как злое начало – как злого Бога. Он приходит к мысли о том, что сам смог бы создать счастливое человечество, превратив землю в рай.